Ներկայացվել է «Արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը» փոխարկիչ ծրագիրը

ՀՀ սփյուռքի նախարարության «Սփյուռք» ամառային դպրոցի մասնակիցների համար ուսումնական ծրագրից հետո կազմակերպվել էր ՀՀ բարձագույն կրթական հաստատությունների ծրագրերի շնորհանդես: Այս մասին հայտնում է ՀՀ սփյուռքի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժինը:

ԵՊՀ գրադարանում ներկայացվել են ԵՊՀ-ի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական, Հայաստանում ֆրանսիական, Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական, «Եվրասիա» միջազգային, Երևանի Հյուսիսային, ՀԲԸՄ Հայկական վիրտուալ (ՀՎՀ) համալսարանների, ֆրանս-գերմանական ինժեներական ինստիտուտի բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերը, ընդունելության կարգը, պայմանները, կրթական ծառայությունները:

Միջոցառման շրջանակներում ներկայացվել է ՀՀ սփյուռքի նախարարության հովանավորությամբ գործարկվող «Արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը» փոխարկիչ ծրագիրը (ծրագրի ղեկավար՝ Էդուարդ Մանուկյան):

«Սփյուռք» ամառային դպրոցի շրջանակներում ամեն տարի կազմակերպվող նման միջոցառումները նպաստում են, որ ավարտող մասնակիցներից շատերը ուսումը շարունակեն հայաստանյան բուհերում: Նրանցից շատերը, դառնալով հայագետ-մասնագետներ, վերադառնում և հայապահպան գործունեություն են ծավալում իրենց բնակության երկրներում՝ ներգրավվելով հայ համայնքներում,

հայկական կազմակերպություններում (այդ թվում՝ երիտասարդական), կրթամշակութային հաստատություններում իրականացվող աշխատանքներին, նախաձեռնելով Հայաստանում բուհական կրթություն ստանալու գործը: